



Կարգապահական գործ թիվ 18149

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019թ-ի ապրիլի 17-ի թիվ 67-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/38-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՏԻԳՐԱՆ ՆԱԴԴԱԼՅԱՆԻՆ ԵՎ ՍԱՄՎԵԼ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Հրանտ Անանյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Կարեն Սարգսյանի, Կարեն Մեժլումյանի կազմով, քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, քննության առնելով փաստաբաններ Տիգրան Նաղդալյանին (արտոնագիր թիվ 1868) և Սամվել Միրզոյանին (արտոնագիր թիվ 245) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Փաստաբան Սամվել Միրզոյանը դիմելով Պալատ հայտնել է, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող թիվ ԵԴ/4267/02/18 քաղաքացիական գործով (**այսուհետ նաև՝ Դատական գործ**) հանդիսանալով հայցվոր Նելլի Դանիելյանի ներկայացուցիչ՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ին ներկայացել է դատարանի Մալաթիա-Սեբաստիա նստավայր, դեռևս 2018 թվականի մարտ ամսից շարունակվող, նույն դատական գործով հրավիրված նախնական դատական նիստին մասնակցելու: Դատական գործով պատասխանող կողմը նախապես պլանավորված դատական նիստերին չի ներկայացել, որի պատճառով դատական նիստերը բազմիցս հետաձգվել են:

Ըստ Դիմողի՝ Դատարանը նշանակված դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննության պատճառով կասեցրել էր Դատական գործի քննությունը, իսկ փորձաքննության արդյունքները ստանալուց հետո այն վերսկսել և կողմերին ծանուցել 23.10.2018թ. նշանակված դատական նիստի մասին: Նշված նիստին դատարան էր ներկայացել պատասխանողը, վերջինս, որպես ներկայացուցիչ հրավիրել էր նաև փաստաբան Տիգրան Նաղդալյանին, ով դատարանին ներկայացրել է

պատասխանողի կողմից 22.10.2018թ. տրված հասարակ գրավոր լիազորագիր: Սակայն, դատարանի կողմից լիազորագրի գննությամբ պարզվել է, որ լիազորագիրը տրվել է 2018 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին ոչ համապատասխան հիմնավորմամբ և առաջարկվել է հաջորդ դատական նիստին, այն կրկին ներկայացնել՝ վերացված տեխնիկական սխալի ուղղմամբ, որը փաստաբանի կողմից ընդունվել է:

Այնուհետև, Տիգրան Նաղդայանի կողմից ներկայացվել է միջնորդություն դատական նիստը հետաձգելու մասին, այն պատճառաբանությամբ, որ նոր է հրավիրվել և ծանոթ չէ գործում առկա փաստաթղթերին, ուստի անհրաժեշտ է դրանց ծանոթանալ: Նշված միջնորդության դեմ Սամվել Միրզոյանը որևէ առարկություն չի ներկայացրել, սակայն, քանի որ Դատական գործի քննությունը շուրջ 7 ամիս պատասխանող կողմի մեղքով ձգձգվել էր՝ խնդրել է դատարանին հնարավոր սեղմ, սակայն գործի նյութերին ծանոթանալու համար բավարար ժամանակ տրամադրել կողմին, իսկ պատասխանողին հորդորել է դատավարական իր իրավունքներից բարեխղճորեն օգտվել և անտեղի չչարունակել ձգձգել նիստերը:

Դիմողը նաև հայտնել է, որ դատական նիստի ընթացքում դատարանի կողմից ծանոթանալու համար իրեն տրամադրված դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննության եզրակացությանը ծանոթանալուց հետո, այն դատարանին վերադարձնելու ժամանակ փաստաբան Տիգրան Նաղդայանը հեզնելով՝ իրեն դիտողություն է արել, թե իբր ինչպես հասկանալ, երբ հորդորում ես պատասխանողին իր դատավարական իրավունքներից բարեխղճորեն օգտվել, երբ ինքդ դրանք չես պահպանում: Այդ առիթով ինքն արձագանքել է, թե պատասխանողը մարտ ամսից նոր է ներկայացել ու, փոխարենն ընդունի իր հորդորը՝ դատավարական իրավունքներից օգտվելու բարեխղճության մասով, իրեն է դիտողություն անում, որը Տիգրան Նաղդայանի կողմից ցավոտ է ընդունվել, անգամ ցուցադրական խոսվել է՝ հայտարարելով, որ, այնքանով, որ դատարանը իրեն չի ընդունել՝ իր լիազորագիրը, ու չի ներգրավվել տվյալ գործով պատասխանողի ներկայացուցիչ, ուստի ինքն ընդհանարապես հրաժարվում է: Այնուհետև վերադառնալով սկսված դատական նիստին՝ բացահայտ, հենց դատարանի դահլիճում գտնվողների ներկայությամբ, փաստաբան Տիգրան Նաղդայանը դիմելով իրեն՝ հայտարարել է. **«արի դուրս գանք, թե կասի ինչու է ինձ դիտողություն անում»:**

Ըստ Դիմողի, այդ իրավիճակն անսպասելի շրջադարձ էր իր համար, նախ այնքանով, որ իր գործընկերն էր իրեն դուրս հրավիրում, այն էլ բորբոքված, վճռական հաշիվ պահանջելու, վրդովված, որ դա որևէ կերպ կապված չէր իրենց անձնավորված հարաբերությունների հետ, առավել ևս, երբ առաջին անգամ էր տեսնում տվյալ անձին, նախկինում անգամ չէր լսել նրա մասին, և երկրորդ՝ իր կողմից բարեխղճության մասին հորդորը վերաբերվում էր պատասխանող կողմին, ով անձամբ առաջին անգամ էր ներկայացել դատարան, ով անընդմեջ տեղին ու անտեղի հայտարարություններ էր անում դատական նիստերը ձախողելու համար, և ոչ փաստաբանին, ով չնայած դատարանի կողմից չընդունված, սակայն բոլոր դեպքերում ներկայացուցիչ էր, ու իր գործն էր անում:

Սամվել Միրզոյանը նաև հայտնել է, որ դատական նիստի ավարտից հետո դուրս գալիս, դեռևս դատարանում Տիգրան Նաղդայանը հետևից մոտենալով իրեն վճռական ասել է, թե. **«Ես Քեզ սպասում եմ ներքևում»:** Իսկ ինքն, առանց ավելորդ խոսքի, երբ

դուրս է եկել, այդտեղ՝ շենքի հենց շեմին, Տիգրան Նաղդալյանը վճռական անհամբերությամբ սպասել է իրեն, կանգնեցրել ու հաշիվ պահանջել, թե ով ես ու ինչ իրավունքով ձայն ես բարձրացրել իր վրա: Այնուհետև, Տիգրան Նաղդալյանը սկսել է իրեն դիմել արհամարհական ու, «դու»-ով, իսկ իր դիտողությանը, թե ինչու է իր հետ «դու»-ով խոսում, հայտարարել է, թե «դու» ես, դրա համար էլ «դու»-ով եմ խոսում, իսկ իր դիտողությանը, թե չես կարող իր հետ նման կերպ խոսել՝ Տիգրան Նաղդալյանը շարունակել է իր անարգանքը՝ հայտարարելով, թե ինքն ինքն է, ու ոնց կուզի, այնպես էլ կխոսի: Տիգրան Նաղդալյանը մի պահ մեղմացել է, ու իրեն դիմել, թե. **«տարիքդ չլիներ այլ կերպ կխոսեի, տարիքդ եմ հարգում»:** Սամվել Միրզոյանը մի պահ տարակուսել է, ու առավել ևս ավելի զարմացել է, քան թե չի հասկացել կատարվող իրողության իմաստն ու էությունը, որից հայտնել է, թե ինչ կապ ունի իր տարիքը, եթե տարիքին է վերաբերվում, ապա անհրաժեշտ չէ վերաբերվել: Սակայն, այդ լսելով, Տիգրան Նաղդալյանը սկսել է ավելի ակտիվանալ ու զագրախոսել, ամեն կերպ ձգտելով դիպչել իր ինքնասիրությանը, որը գուցե և հաջողվել է նրան, այնքանով, որ ներքին լարվածությունը հասել է գագաթնակետին, որի ժամանակ էլ դիմելով Նաղդալյանին ասել է, թե. **«կարող ա կալանավորվել է ուզում ես կարող եմ կալանավորել տալ»:** Այդ ժամանակ Տիգրան Նաղդալյանը զգաստացել է, ապա ուղղակի հայտարարել, թե ինքը՝ Սամվել Միրզոյանը, նրանցից է. **«Բ..¹ ես»**, որն իր համար անսպասելի, հանկարծակի բարձրաձայն հնչեցված, հրապարակավ բարոյական ապտակ է եղել, որի պատճառով քարացել ու ապակողմնորոշվել է, և միայն ասել է՝ գնա հեռացի ու պատասխան ես տալու ասածիդ համար, իսկ նա, այդ պահից անընդմեջ շարունակական, նույն. **«Բ..² ես»** բառերն է կրկնել, որին ի պատասխան ինքն ասել է, որ այն ինչ ասում է իրեն. **«Բ..³ հայրդ է»:** Այնուհետև, փաստաբան Տիգրան Նաղդալյանը այլայլվել է, ագրեսիվացել ու դարձել անկառավարելի, և Սամվել Միրզոյանի մոր հասցեին հայհոյանքներ է հնչեցրել, որոնք տրվել են անընդմեջ գոռգոռոցներով, ոչ թե լսելի միայն ներկաներին, այլև դատարանի երկու կարգադրիչներին, ովքեր փորձել են կարգի հրավիրել, սակայն նա փորձել է նաև ազատվել կարգադրիչներից և հարձակվել իր վրա՝ մարմնական վնաս հասցնելու համար: Սակայն, ի վերջո Տիգրան Նաղդալյանն իր հասցեին շարունակական հայհոյանքներ ուղղելով հեռացել է, իսկ ինքը, դեռևս իրեն զգում է նվաստացած և անարգված:

Փաստաբան Սամվել Միրզոյանը վկայակոչելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Փաստաբանի վարքագծի կանոնադրքի 1.1, 2.2.1, 2.2.2 և 5.1.2 ենթակետերը խնդրել է փաստաբան Տիգրան Նաղդալյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 30.11.2018թ. թիվ 414-Ա/ԿԳ-18149 որոշմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝

¹ Ամբողջական բառը սույն որոշման մեջ չի նշվել

² Ամբողջական բառը սույն որոշման մեջ չի նշվել

³ Ամբողջական բառը սույն որոշման մեջ չի նշվել

- փաստաբան Տիգրան Նաղդալյանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագրքի**) 2.2.3, 5.1.2 և 5.2.1(1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

-փաստաբան Սամվել Միրզոյանի նկատմամբ Կանոնագրքի 2.2.3 և 5,2.1(1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

03.12.2018թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ՝ Նվեր Սարգսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Սույն կարգապահական գործը հարուցվել է փաստաբան Սամվել Միրզոյանի Դիմումի հիման վրա:

Փաստաբան Սամվել Միրզոյանի դիմումից բխում է, որ 2018 թվականի հոկտեմբերի 23-ին գտնվելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Մալաթիա-Սեբաստիա նստավայրում, Սամվել Միրզոյանի և Տիգրան Նաղդալյանի միջև տեղի ունեցած վիճաբանության ընթացքում Տիգրան Նաղդալյանի կողմից Սամվել Միրզոյանին ուղղված «Բ...⁴ ես» արտահայտությունից հետո, վերջինս Տիգրան Նաղդալյանին փոխադարձել է «Բ...⁵ հայրդ է» արտահայտությամբ, այնուհետև, ըստ դիմումի՝ Տիգրան Նաղդալյանի կողմից հայիոյանքներ է ուղղվել Սամվել Միրզոյանի նաև մոր հասցեին, ինչպես նաև փորձել է հարձակվել Սամվել Միրզոյանի վրա:

13.03.2019թ. Խորհրդի նիստին ներկայացել է փաստաբան Սամվել Միրզոյանը և ըստ էության հաստատել Դիմումում նշված հանգամանքները:

17.04.2019թ. Խորհրդի նիստին ներկայացել է և հայտնել է, որ պատրաստ է հաշտվել փաստաբան Տիգրան Նաղդալյանի հետ և հայցել Տիգրան Նաղդալյանը ներողամտությունը:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

13.03.2019 թվականի Խորհրդի նիստին ներկայացել է Պատասխանողը և ըստ էության հերքել է Դիմումում նշված հանգամանքները չեն համապատասխանում իրականությանը և իր կողմից որևէ հայիոյանք չի հնչել թե՛ իր կողմից և թե՛ փաստաբան Սամվել Միրզոյանի կողմից:

17.04.2019 թվականի Խորհրդի նիստին ներկայացել է փաստաբան Տիգրան Նաղդալյանը և հայցել փաստաբան Սամվել Միրզոյանի ներողամտությունը:

3.3. Վկաների ցուցմունքները.

⁴ Ամբողջական բառը սույն որոշման մեջ չի նշվել

⁵ Ամբողջական բառը սույն որոշման մեջ չի նշվել

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

04.02.2019թ. Նախապատրաստողը կազմել է եզրակացություն:

05.02.2019թ. կարգապահական գործը հանձնվել է խորհրդին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 13.03.2019թ., ժամը՝ 19:00-ին, 17.04.2019թ., ժամը՝ 18:30-ին ՀՀ փաստաբանների Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակում:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- թիվ ԵԴ/4267/02/18 քաղաքացիական գործով փաստաբան Տիգրան Նաղդալյանը և Սամվել Միրզոյանը հանդիսացել են հակառակորդ կողմերի փաստաբաններ:

Նշված փաստը հաստատվում է Դիմումով:

- Դիմող Սամվել Միրզոյանը հրաժարվել է իր դիմումից:

Նշված փաստը հաստատվում է Սամվել Միրզոյանի բացատրությամբ:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Սամվել Միրզոյանը փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 15.07.1994թ., և 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել:

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Տիգրան Նաղդալյանը փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 21.12.2014թ., և 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբաններ Տիգրան Նաղդալյանի և Սամվել Միրզոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք

է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Կանոնագրքի 5.1.2 ենթակետի համաձայն` փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական աշխատակիցներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ:

Կանոնագրքի 5.2.1 (1) ենթակետի համաձայն` Փաստաբանը չպետք է՝ (1) թույլ տա այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ:

Կարգի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարավել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի:

Ղեկավարվելով վերոգրյալ իրավական նորմերով և հիմք ընդունելով սույն կարգապահական գործում առկա փաստական տվյալները՝ Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ Սամվել Միրզոյանի կողմից չեն ներկայացվել դիմումով վկայակոչված՝ փաստաբան Տիգրան Նաղդալյանի վարքագծին վերագրվող արարքը հիմնավորող ապացույցներ: Մասնավորապես, Սամվել Միրզոյանի կողմից սույն կարգապահական գործի շրջանակներում չի հիմնավորվել, որ փաստաբան Տիգրան Նաղդալյանի կողմից իր հասցեին հնչել են հայհոյախառն արտահայտություններ: Մյուս կողմից Խորհուրդը հատկանշական է համարում նաև այն հանգամանքը, որ փաստաբան Տիգրան Նախդալյանի կողմից չի ներկայացվել որևէ բացատրություն, ինչպես նաև Դիմում համապատասխանաբար Սամվել Միրզոյանի վարքագիծը քննարկելու համար:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարծում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սամվել Միրզոյանի կողմից իր դիմումից հրաժարվելու, իսկ Տիգրան Նաղդալյանի կողմից Սամվել Միրզոյանի վարքագծի վերաբերյալ բացատրություն չներկայացնելու պայմաններում, երբ յուրաքանչյուր փաստի ապացուցման պարտականություն կրում է փաստը վկայակոչող կողմը, հաստատված չէ պատասխանող Սամվել Միրզոյանի կողմից Կանոնագրքի 2.2.3 և 5.2.1 (1) ենթակետերում նշված արարքի կատարումը, իսկ Տիգրան Նաղդալյանի կողմից 2.2.3, 5.1.2 և 5.2.1(1) :

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի,

39.8. հողվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հողվածի 1-ին մասի 2-րդ կետի 30-րդ հողվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Տիգրան Նաղդայանի (արտոնագիր թիվ 1868) նկատմամբ Կանոնագրքի 2.2.3, 5.1.2 և 5.2.1(1) ենթակետերի պահանջների խախտման հարկանիշներով հարուցված թիվ ԿԳ-18149 կարգապահական վարույթը կարճել:

2. Փաստաբան Սամվել Միրզոյանի (արտոնագիր թիվ 245) նկատմամբ Կանոնագրքի 2.2.3 և 5.2.1(1) ենթակետերի պահանջների խախտման հարկանիշներով հարուցված թիվ ԿԳ-18149 կարգապահական վարույթը կարճել:

3. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Հրանտ Անանյան

17 ապրիլի 2019թ.
թիվ ԿԳ/38-Ա
ք. Երևան